ՄԻԱՑԵԱԼ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովուրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումը ապահովելու համար, Հայաստանի կառավարութիւնը համաձայն բովանդակ հայ ժողովուրդի միահամուռ կամքին ու ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան բաժան մասերը մշտենջենապէս միացած են իրար անկախ պետական միութիւն:

«Ուղիղ մի տարի առաջ Ռուսահայերի Համագումարից ընտրուած Հայոց Ազգային Խորհուրդը, յայտարարեց իրեն Անդրկովկասեան հայկական գաւառների բարձրագոյն իշխանութիւն: Ազգային Խորհուրդի կազմած կառավարութիւնն այդ քաղաքական ակտի մասին, պաշտօնապէս պետութեանց ներկայացուցիչներին յայտնելուց յետոյ՝ այս մի տարուայ մէջ փաստօրէն հաստատել է իր իշխանութիւնն Անդրկովկասի հայկական գաւառներում:

1919 թ. Փետրուար ասսին Երեւան քաղաքում կայացած Արեւմտահայ Բ. Համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց որ, նա Հայաստանն Միացեալ եւ Անկախ է ճանաչում:

«Այժմ, Անդրկովկասում եւ Օսմանեան կայսրութեան սահմաններում գտնուած պապենական հայկական երկիրների միացման եւ անկախութեան այս ակտը կատարելով Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ Միացեալ Հայաստանի պետական ձեւն է Ռամկավար Հանրապետութիւն, եւ որ ինքը հանդիսանում է Միացեալ Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը:

«Այդպիսով՝ ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագոյն տէրն ու տնօրէնը, եւ Հայաստանի Պարլամենտն ու Կառավարութիւնը հանդիսանում են Միացեալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագոյն օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնը:

«Հայաստանի Կառավարութիւնը սոյն ակտը հրատարակում է 1919 թ. Ապրիլ 27 Պարլամենտի որոշմամբ Կառավարութեանը տրուած յատուկ լիազօրութիւնների հիման վրայ»:

1919 Մայիս 28, Երեւան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ.- 885-1045. Արծիւը իբրեւ պետական զինանշան գործածեցին նաեւ Բագրատունիները:

ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ ՌՈՒԲԻՆԵԱՆՆԵՐՈՒ զինանշանը դարձաւ արծիւը:

Զինանշաններ ունեցած են նաեւ բոլոր հայ նախարարական տունները: Այսպէս. Մամիկոնեաններու զինանշանը արծիւն էր՝ մագիլներուն մէջ աղեղ մը բռնած, Արծրունիներունը նոյնպէս արծիւն էր, եւայլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ.- 1918-1920. — 1920 Յունիսին կառավարութիւնը հաստատեց Հայաստանի Հանրապետութեան զինանշանը, որու նախագիծը պատրաստած էր ճարտարապետ Ալ. Թամանեան, իսկ նկարը՝ նկարիչ Յակոբ Կոջոյեան: Զինանշանը կը բաղկանար առիւծի եւ արծիւի միջոցով երկու կողմէ բարձրբռնուած եւ չորս մասի բաժնուած վահանէ մը: Բաժիններէն իւրաքանչիւրը կը պատկերացնէր պատմական Հայաստանի Թագաւորական տուներէն մէկուն զինանշանը՝ Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց եւ Ռուբինեաց: Վահանին կեդրոնը աւելի փոքր վահանաձեւ տարածութեան մը մէջ գծուած են Մասիսները, իսկ անոնց վերեւ՝ Հ.Հ. տառերը՝ իբրեւ սղումը «Հայաստանի Հանրապետութիւն» բառակապակցութեան: Վահանին ներքեւ կան հասկեր, սուր, շղթայ եւ գրիչ: